

## **ՀՀ Արմավիրի մարզպետ Ջամբարձում Մաթևոսյանի խոսքը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա կապակցությամբ**

23.04.2019

Արմավիրի մարզի հարգելի բնակիչներ, սիրելի հայրենակիցներ,  
Այսօր Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի 104-րդ տարելիցն է:

Օսմանյան Թուրքիայի կողմից Առաջին աշխարհամարտի տարիներին ծրագրված և  
իրականացված հրեշավոր ոճրագործությունը վաղեմության ժամկետ չունեցող  
հանցագործություն է:

Ապրիլի 24-ին համայն հայությունը և առաջադեմ մարդկությունը ոգեկոչում է 1,5  
միլիոն անմեղ նահատակների հիշատակը, հիշում նրանց տառապանքի ուղին և  
աղոթում նրանց հոգիների խաղախության համար:

Արտահայտելով մեր հարգանքն ու խոնարհումը Հայոց ցեղասպանության Սուրբ  
Նահատակների հիշատակին՝ որպես ցեղասպանություն վերապրած և մահին հաղթած  
ժողովուրդ՝ մեր պարտքն է համախմբվել ազգային նպատակների շուրջ և կառուցել մեր  
բոլոր սերունդների երազած հայրենիքը: